ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<16>> հունիսի 2025թ. N ՄՈ/584 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N878-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին վերապահված գործառույթների իրականացման նպատակով.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գործառույթներն իրականացնող փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-06-16 10:25:15 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հ ա վ ե լ վ ա ծ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի հունվարի ի 16-ի
N 584-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏԻ

1. Փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները

Փորձագետը ներգրավվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գործառույթներն իրականացնելու նպատակով:
Փորձագետի կողմից իրականացվող գործառույթներն են՝

- ՀՀ կառավարության 2022թ. սեպտեմբերի 22-ի թիվ 1481-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգով հանրակրթական ուսումնական հաստատությունների բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցների ու նորմատիվների հաստատման նոր ընթացակարգի հետ կապված գործառույթները,
- ՀՀ Արմավիրի մարզպետի /այսուհետև Մարզպետ/ ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացմանն ուղղված աշխատանքների կատարման մասնակցություն,
- ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին վերապահված լիազորությունների ՀՀ Արմավիրի մարզի /այսուհետև Մարզ/ հաշվապահական հաշվառման բնագավառում նոր փոփոխությունների իրականացման ապահովում,
- Մարզի ֆինանսական գործունեության ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքների իրականացում,
- Մարզի ֆինանսական զարգացման հնարավորությունների վերլուծություն, ներդոլորտային գերակայությունների սահմանում և հնարավոր ֆինանսական աղբյուրների նախանշում,
- Մասնավոր հատվածի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված համագործակցության, ինչպես նաև մասնավոր ներդրումային առաջարկների մշակմանն աջակցության ցուցաբերման, ներդրումային էլեկտրոնային վարման աշխատանքների իրականացում,
- Մարզի համայնքներում տարբեր ֆինանսավորման աղբյուրներով իրականացվող սուբվենցիոն ծրագրերի մշակմանն ուղղված աշխատանքներին մասնակցություն, ինչպես նաև հաշվապահական հաշվառման ոլորտներին առնչվող փաստաթղթերի պատրաստում,
- Մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների, ինչպես նաև պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսեր ունեցող առևտրային ընկերությունների հիմնական միջոցների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, ամփոփման աշխատանքների իրականացում,
- Պետական բյուջեով նախատեսված՝ Աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերի հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվությունների (ամսական, եռամսյակային, տարեկան) կազմման և լիազոր մարմիններ ներկայացման աշխատանքների իրականացում,
- Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով Աշխատակազմի ակտիվների և պարտավորությունների գույքագրման աշխատանքներին մասնակցություն:

2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգավվում է 6 ամիս ժամկետով:

3. Ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գործառույթների իրականացում:

4. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը

Փորձագետը ներկայացնում է հաշվետվություն աշխատանքների իրականացման ավարտին:

5. Աշխատանքների գնահատման չափանիշները

Աշխատանքը գնահատվում է ներկայացված հաշվետվության հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Աշխատանքների գնահատման արդյունքների ամփոփման ժամկետները

Աշխատանքների գնահատման արդյունքները ամփոփվում են հաշվետվության ներկայացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Աշխատանքը կատարելու համար փորձագետին ներկայացվող պահանջները

1. Տնտեսագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,
2. Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ,
3. Գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,
4. Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝ **Ա. Հակոբյան**